

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

*25.05.2005թ. նիստին*

### *Մասնակցում էին՝*

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Վ.Դանիելյանը, Հ.Պետրոսյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա. Աղազարյանը.

### *Հրավիրված էին՝*

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Սիրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ.Սիրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Գ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ.Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի պետ Ա.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Հարությունյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Սարգսյանը:

### *Նիստում լավեցին հետևյալ հարցերը.*

1. «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» Ձև թիվ 1-SS (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին:

*/Ձեկուցող՝ Ա. Պետրոսյան, Ա Հարությունյան/*

### *Որոշեցին՝*

Հաստատել «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» Ձև թիվ 1-SS (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի փետրվարի 23-ի թիվ 05-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին.

*/Ձեկուցող՝ Ն. Բաղդասարյան/*

### *Որոշեցին՝*

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի փետրվարի 23-ի «Հանցագործությունների մասին» Ձև թիվ 1-հանցագործություն (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. որոշման հավելված 1-ով հաստատված «Հանցագործությունների մասին» Ձև թիվ 1-հանցագործություն (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը լրացնել նոր «022» տողով հետևյալ բովանդակությամբ՝

«022 Հանցագործությունների ընդհանուր քանակից՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններ»:

*/Նորմատիվ/*

**3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

3.1 Հաշվետվություն 2005թ. մայիսի 7-11-ն Ամմանում կայացած «Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու առաջընթացը դիտարկող տվյալները և ցուցանիշները» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ:

*/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 2005թ. մայիսի 7-11-ն Ամմանում կայացած «Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու առաջընթացը դիտարկող տվյալները և ցուցանիշները» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

*/Արձանագրային/*

***03.06.2005թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դանիելյանը, Վ.Դավթյանը, Հ.Պետրոսյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա. Աղազարյան.

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Գ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կուլումջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Սարգսյանը:

**Նիստում լավեցին հետևյալ հարցերը.**

**1.«Համայնքի գիրք» (տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1) հաշվառման փաստաթուղթը հաստատելու մասին:**

*/Զեկուցող՝ Կ. Կույումջյան, Ա. Ավագյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Համայնքի գիրք» (տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1) հաշվառման փաստաթուղթը՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

**2. «Գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակ» (հաշվառման ձև թիվ 2) հաշվառման փաստաթուղթը հաստատելու մասին:**

*/Զեկուցող՝ Կ. Կույումջյան, Ա. Ավագյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակ» (հաշվառման ձև թիվ 2) հաշվառման փաստաթուղթը՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

**3.«Տնային տնտեսությունների այբբենական գիրք» (տնտեսությունների հաշվառման ձև թիվ 3) հաշվառման փաստաթուղթը հաստատելու մասին:**

*/Զեկուցող՝ Կ. Կույումջյան, Ա. Ավագյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Տնային տնտեսությունների այբբենական գիրք» (տնտեսությունների հաշվառման ձև թիվ 3) հաշվառման փաստաթուղթը՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

**4.«Ցուցումներ գյուղական համայնքներում տնային տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1՝ Համայնքի գիրքը, ձև թիվ 2՝ Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը և ձև թիվ 3՝ Տնային տնտեսությունների այբբենական գիրքը վարելու վերաբերյալ» փաստաթուղթը հաստատելու մասին:**

*/Զեկուցող՝ Կ. Կույումջյան, Ա. Ավագյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Ցուցումներ գյուղական համայնքներում տնային տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1՝ Համայնքի գիրքը, ձև թիվ 2՝ Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը և ձև թիվ 3՝ Տնային տնտեսությունների այբբենական գիրքը վարելու վերաբերյալ» փաստաթուղթը՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

**07.06.2005 նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դանիելյանը, Վ.Դավթյանը Հ.Պետրոսյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա. Աղազարյանը.

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը:

**Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

**1. «2001թ. մարդահամարի տվյալների բազայից՝ 10%-ը, անվանազերծված տեսքով, ԱՄՆ Մինեսոտա համալսարանի IPUMS միջազգային ծրագրին տրամադրելու մասին:**

*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Կ. Կույումջյան/*

**Որոշեցին՝**

Հիմք ընդունելով «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգի 1.3 կետի 3-րդ մասի 6-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Առաջարկել Մինեսոտայի համալսարանին քննարկելու Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից էլեկտրոնային (լազերային) եղանակով արդեն իսկ հրապարակված 10%-ոց համակցությամբ գիտահետազոտական նպատակներով անվճար օգտագործելի անվանազերծված տվյալների բազայից խնդրո առարկա տեսանկյունով օգտվելու հնարավորություն: Իսկ կառուցվածքային առումով վերջինիս կողմից այլ երկրների հետ տվյալների բազաների համադրելիության ապահովման խնդրի առկայության դեպքում՝ վերջինիս տրամադրել, համադրելիության պահանջներին համապատասխանող 10%-ոց համակցության անվանազերծված տվյալների այլ բազա:

*/Արձանագրային/*